



Կարգապահական գործ թիվ ԿԳ-15042

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 194-րդ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/113-Ա

**ՓԱՍՏԱՐԱՆ ՀԱՍՄԻԿ ԶԱԼԱԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Լիպարիտ Սիմոնյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Կարեն Մեծլումյանի,

Քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի

Քննության առնելով փաստաբան Հասմիկ Զալալյանին (արտոնագիր թիվ 431) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

ՀՀ Փաստաբանների Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ-ին Պալատի Նախագահին է ներկայացրել է տեղեկանք, այն մասին, որ փաստաբան Հասմիկ Զալալյանը (արտոնագիր թիվ 431) 2014թ. հոկտեմբերից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի պարտավորություն:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի առաջին տեղակալի 01.06.2015թ. թիվ 127-Ա/ԿԳ-15042 որոշմամբ փաստաբան Հասմիկ Զալալյանի (արտոնագիր թիվ 431) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

02.06.2015թ. կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի սեպտեմբերի 28-ին ժամը 19:30-ին ՀՀ Փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Նիստի օրվա և ժամի մասին փաստային և էլեկտրոնային հասցեներով ծանուցվել է փաստաբան Հասմիկ Զալալյանը, սակայն վերջինս նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- 1) Փաստաբան Հասմիկ Զալալյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 05.01.2002թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ. տրամադրված տեղեկանքով),
- 2) Փաստաբան Հասմիկ Զալալյանը անդամավճարի գծով ունի 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի պարտք 2014թ. հոկտեմբերից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),
- 3) Փաստաբան Հասմիկ Զալալյանը 2014թ. հոկտեմբերից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի պարտքն ամբողջությամբ վճարել է (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 25.09.2015թ. տրամադրված տեղեկանքով):

5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Հասմիկ Զալալյանի (արտոնագիր թիվ 431 ստացել է 05.01.2002թ.) նկատմամբ 2006-2015թթ ընկած ժամանակահատվածում 3 անգամ հարուցվել է կարգապահական անդամավճարի պարտք ունենալու մասով՝

- Պալատի խորհրդի 07.07.2009թ. թիվ 16/2 որոշմամբ կարգապահական վարույթը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով,
- Պալատի խորհրդի 13.11.2009թ. թիվ 28/6 որոշմամբ կարգապահական վարույթը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով,
- Պալատի խորհրդի 09.08.2011թ. թիվ 16/3 որոշմամբ կարգապահական վարույթը կարճվել է արտոնություն կիրառելու հիմքով,

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հասմիկ Զալալյանի նկատմամբ կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր

խմբագրությամբ)» 17-րդ կետի՝ «Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Երկրորդ կամ հետագա ցանկացած անդամավճարը չվճարելու խախտման դեպքում՝ անկախ կարգապահական վարույթն հարուցելուց հետո պարտքի մարման հանգամանքից, կարգապահական վարույթն այդ հիմքով չի կարող կարճվել»:

ՀՀ Փաստաբանների Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ-ի տեղեկանքից և դրան կից հավելվածից հետևում է, որ փաստաբան Հասմիկ Զալայանի (արտոնագիր թիվ 431) նկատմամբ նախկինում չի կիրառվել Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.7-րդ և 39.9-րդ հոդվածներով, Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան՝ Հասմիկ Զալայանի (արտոնագիր թիվ 431), նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետի՝ հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին հանձնարարել՝ սույն որոշման մասին իրազեկելու փաստաբան Հասմիկ Զալայանին:

Ծանոթություն՝ Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Լիպարիտ Սիմոնյան